Ո Ր Ո Շ Մ Ա Ն Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 25.12.2018թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ալավերդի համայնքի Թումանյան փողոցի
հարավային մասում գտնվող հողամասը
համայնքային սեփականություն ճանաչելու
և օտարման թույլտվություն տալու մասին
(Զեկ. Ս. ԽԵՉՈՒՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության մասին օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01.06.2010թ. թիվ 186-Ն հրամանով, հաշվի առնելով, որ հողամասի նկատմամբ գոյություն չունեն իրավունք հաստատող փաստաթղթեր և այն Հայաստանի Հանրապետության կառավարության 29.06.2006թ. N 1084-Ն որոշումով՝ սխալմամբ չի փոխանցվել Ալավերդի համայնքին՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ կապված սուբյեկտի անճշտությունների ուղղման համար Ալավերդի համայնքի Թումանյան փողոցի հարավային մասում գտնվող՝ 0.0015 հա մակերեսով (ծածկագիր՝ 06-002-0796-0007) հողամասը ճանաչել համայնքային սեփականություն և թույլատրել օտարել:

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ
06-002-0796-0007 ԾԱԾԿԱԳՐԻՑ 15.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ « ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՅԼ
ՀՈՂԱՏԵՍՔ » ՀՈՂԱՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:1000



ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀՈՂԱՄԱՍ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ և ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ. ՆԱՀԱՐՅԱՆ